

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ГЕТАЗАТСКАЯ
СРЕДНЯЯ ШКОЛА
ИМЕНИ НОРАЙРА
МАНАСЕРЯНА
АРАРАТСКОГО МАРЗА



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
«ԳԵՏԱԶԱՏԻ ՆՈՐԱՅՐ
ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

REPUBLIC OF ARMENIA ARARAT REGION SCHOOL OF GETAZAT VILLAGE

Արարատի մարզ գ. Գետազատ Араатский марз с. Гетазат E-mail: getazat@schools.am

28.08.2023թ.

Ելք № 130

ԿԳՄՄՆ-ի գլխավոր
քարտուղար
տիկին Հ.Հակոբյանին

Հարգարժան գլխավոր քարտուղար
Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ <<Արարատի մարզի Գետազատի
Ն.Մանասերյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում
առաջացել են դասվարի /8դասաժամ/, <<Ֆիզիկա>>/13դասաժամ/,
<<Տեխնոլոգիա>>/4դասաժամ/, <<Կերպարվեստ>>/2դասաժամ/,
<<Հայոց եկեղեցու պատմություն>> / 5 դասաժամ /,
<<Կենսաբանություն>>/2դասաժամ/,
<<Հայոց պատմություն>>/8դասաժամ/առարկաների ուսուցչի թափուր
տեղեր:
Դպրոցը պատրաստվում է հայտարարություն տալ <<Կրթություն>>
շաբաթաթերթում:

Կից ներկայացվում է հայտարարությունը:

Առդիր 1 էջ:

Տնօրենի պաշտոնակատար՝



Ա.Ղազարյան

Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Գետազատի Ն.Մանասերյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Ֆիզիկա>>(13 դասաժամ), <<Դասվար>> (8 դասաժամ), <<Կերպարվեստ>> (2դասաժամ), <<Տեխնոլոգիա>> (4դասաժամ), <<Հայոց եկեղեցու պատմություն>> (5դասաժամ), <<Կենսաբանություն>> (2 դասաժամ), <<Հայոց պատմություն>> (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. սեպտեմբերի 15-ին՝ ժամը 15:00-ին**, Արարատի մարզի Գետազատի Ն.Մանասերյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ Գ.Գետազատ, Բաղրամյան 1/1 : Տեղեկությունների համար զանգահարել 093-641001 հեռախոսահամարով: